Մատենադարանը։ Կազմակերպուել են Մատենադարանի գիտական սեսիաներ, ցուցահանդէսներ, որոնց յաճախել են հազարաւոր այցելուներ և ունկնդիրներ։

Մատենադարանի նկատմամբ աճում է ամբողջ Սովետական Միութեան գիտական հիմնարկների հետաքրքրութիւնը, որովհետեւ հայ կուլտուրայի այս գանձարանում պահուող նիւթերը արժէքաւոր են ոչ միայն հայ կուլտուրայի, այլեւ Մերձաւոր Արեւելքի այլ ժողովուրդների ու համամարդկային ընդհանուր կուլտուրայի պատմութեան ուսումնասիրութեան տեսակէտից։ Մեր ձեռագրերի ուսումնասիրութեամբ, արժէքաւորմամբ ու մասսայականացմամբ զբաղւում են արդէն ոչ միայն բանասէրները, որոնք միմիայն տեքստերի հրատարակելու աշխատանքով են զբաղւում, այլեւ տարբեր գիտութիւնների՝ գրականութեան, պատմութեան, նկարչութեան, փիլիսոփայութեան, քիմիայի, բժշկութեան, աստղաբաշխութեան, իրաւաբանութեան, տնտեսագիտութեան մասնագէտներ և այլ բնագաւառների հմուտ գիտնականներ։

Գիտական ամենալայն շրջանների հետաքրքրութիւնը բաւարարելու նպատակով է, որ Հայաստանի կառավարութեան որոշմամբ ընթացիկ տարում Մատենադարանի դիրեկցիան ձեռնարկել է հայկական ձեռագրերի լրիւ և ընդարձակ գիտական ցուցակի հրատարակման գործին։

Ձեռագրերն այժմ պահւում են նորակառոյց, յարմար մի շէնքի մէջ և ապահովուած են նրանց պահպանութեան համար պահանջուող համապատասխան պայմաններով, գիտաշխատանքի սենեակներով։ Սակայն Մատենադարանի գիտական աշխատանքի առաջիկայ տարիների նախատեսուող ծաւալի մեծացումը անհրաժեշտ է դարձրել նոր շէնքի կառուցումը։

Հայաստանի կառավարութեան և Հայաստանի Կոմունիստական Պարտիայի Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Յարութիւնեանի նախաձեռնութեամբ Երեւանի գլխաւոր փողոցներից մէկից՝ Ստալինեան պողոտայից դէպի Քանաքեռ տանող ճանապարհի մօտ ընկնող ծառազարդ վայրում արդէն սկսուած են Մատենադարանի նոր շէնքի կառուցման հողային աշխատանքները։ Այդ շէնքը՝ ըստ հաստատուած նախագծի՝ ունենալու է հետագայ աշխատանքներից բխող յարմարութիւնները, գիտութեան վերջին խօսքով կառուցուած գրապահոցներ, ցուցահանդէսի, ընթերցանութեան, հայագիտութեան, կոնֆերանսների և այլ հարցերի ուսումնասիրութեանը նուիրուած բազմաթիւ յատուկ սրահներ, գիտնականների պարապմունքի առանձնասենեակներ, որոնք ձեւաւորուելու են հայկական՝ միջնադարեան ճարտարապետութեան ոճով։ Շէնքն ամբողջութեամբ ծրագրուած է որպէս հայկական հին ճարտարապետութեան մի կոթող և զարդարուած է լինելու Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Ղազար Փարպեցու, Մ. Խորենացու, Եղիշէի, Եզնիկի, Շիրակացու, Փաւստոս Բիւզանդի և բազմաթիւ այլ մեծ մատենագիրների, գիտնականների ու բանաստեղծների խոշոր արձաններով ու նկարներով։

Շէնքի նախագիծը կազմել է վաստակաւոր ճարտարապետ Մ. Գրիգորեանը, իսկ քանդակների և նկարների վրայ աշխատում են ժողովրդական նկարիչ Յակոբ Կոջոյեանը, արուեստի վաստակաւոր գործիչներ Արա Սարգսեանը, Սուրէն Ստեփանեանը, քանդակագործ Ուրարտուն և ուրիշ հմուտ արուեստագէտներ։

Հայ ժողովուրդը սիրել է տասնեակ դարերի իր մեծ պատմութիւնը ու կուլտուրան, պահպանել է այն իր աչքի լոյսի պէս և կառուցում է նրա համար իր մայրաքաղաքի լաւագոյն շէնքերից մէկը, որպէսզի ժողովրդական այդ մեծ հարստութիւնն աւելի լայնօրէն օգտագործուի մեր ժողովրդի շահերին ծառայող գիտութեան համար։

ՓՐՈՖ. Գ. ԱԲՈՎ

(Արտատպուած «Սով. Հայաստան»էն. Թ. 2 Օգոստոս 1945)

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Յարութիւն Ա. Քէֆէլեան. Աշխարհագաշտ (Եղեանի գիւղերը Անդրէաշէ և շրջաններու ինտերէս, Սու-Շէհէրի). Փարիզ, 1937.

Զարուհի Ծաղկունի. Աւետիք Իսահակեան (բանախօսութիւն մը բանաստեղծին 70-ամեակին առթիւ). Փարիզ, 1946.

Վահրամ Սօֆեան. Նոր Գարուն (բանաստեղծութիւններ). Նիւ-Եորք, 1946.

Հ. Գ. Բ. Բժիշկին գիրքէն փրցուած էջեր և քերթուածներ. (Սեւակ) Փարիզ, 1946.

Վարդան Յ. Խօշիկեան. Մալկարայի հայ գաղութը (1610–1922 թուական). Փլովտիւ, 1943.

Խմբագր. Տիգրան Բուղդեան, իր կեանքը և իր մէկ գործը՝ Սպիտակ ածուխը Հայաստանում. Փարիզ, 1945.

*Vazkène Aykouni.* Arméniens, peuple tragique. Beyrout, 1945.

Անի. Ամսագիր գրականութեան և Արուեստի. Պէյրութ, 1946. Ա. տարի թիւ 3.

Աւետիս Գ. Մեսումենց. Նարօտ. հաւաքածոյ հայ ժողովրդական երգերու Հին Արաբկիրէն և շրջաններէն. Պոլսոյ, 1946.

Սայեաթ-Նովա. Մահեան իմաստութեան, գեղեցկութեան և անմահայց սիրոյ. Աղեքսանդրիա, 1944.

Հ. Շէմս. Ոսկնական. Աղեքսանդրիա, 1943.

Արշակ Ալպօյաճեան. Պատմութիւն Հայ գաղթականութեան. Գահիրէ, 1941.

Վահրամ Տաարեան. Գերեզմաններու մէջէն և Սէւ Հողին. Նիւ-Եորք, 1945.

Վահրամ Տաարեան. Գէպի Անապատ (փրցուած էջեր օրագրէս). Նիւ-Եորք, 1945.

Յակոբ Գույումճեան. Գրիգոր Մ. Սինի երաժշտագէտը և մարդը. Ֆիլատելֆիա, 1943.

Յարութիւն Տապաղեան. Ծաղկաձոր (բանաստեղծութիւններ), Փարիզ, 1946.

Պապ-Ուխտի. 1941-էն մինչեւ 1946-ի մարտը։

Տորթ. Տ. Վարժապետեան. Կեանքի բառուցիէն. Պէյրութ, 1946.

*Population.* Trimestrielle de l' Institut national d' études démographiques, Janvier-Mars, N.º 1º 1946, 108 Boulevard St. Germain. Paris (6).

Տիգրան Սկունց. Հայ կղերն Ամերիկայի մէջ, 1945.

» » . Արշամ Անօոնեան, 1943.

*Dikran Spear.* Through Presidential Campaigns.

» » . Traditions of the Tigris, 1946.

Յ. Թիրապեան. Նոր երկիր (բացառիկ թիւ). Փարիզ, 1946.

Armenian Quarterly, vol. 1, num. 1. New-York, 1946. Editor: Constant Zarian.

## «ԲԱԶՄԱՎԷՊ»ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

| | |
|---|---|
| | Հ. Քերոբէ Վ. Զրաքեան |
| ԵԳԻՊՏՈՍ | Հ. Աբրահամ Ազատեան |
| ՀԱԼԷՊ ԵՒ ԸՆԴՀ. ՍԻՒՐԻԱ | Հ. Աւետիք Ծովեան |
| ՓԱՐԻԶ | Պր. Բաբգէն Պօտոսեան |
| ԼՈՆՏՐԱ | Պր. Արշակ Սաֆրաստեան |
| ՄԻԼԱՆ | Օր. Պերճուհի Պօղոսեան |

digitised by A.R.A.R.@

# ԳՐԱԿԱՆ ՑՈՂՔԵՐ

«ԳՐԱԿԱՆ ՑՈՂՔԵՐ»ու շարքը — որու դեռ առաջին ութը հատորները լոյս տեսած են,

ԱԼԻՇԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ
ԹՈՒՄԱՆԵԱՆ
ԴՈՒՐԵԱՆ
ԶԱՐԴԱՐԵԱՆ

*պիտի կազմէ ամէնէն ճոխ եւ ամէնէն կատարեալ մատենադարանը մեր առձմային նոր Գրականութեան:*

*Ամէն Հայ պէտք է սիրով ողջունէ Մխիթարեան Միաբանութեան զոհաբեր ճիգերով կազմուած այս գերգնահատելի մեծ եւ կարեւոր ձեռնարկը, որ այլեւս ամենամեծ դիւրութիւնը պիտի տայ Հայ աշակերտութեան ու ամբողջ ընթերցասէր հասարակութեան՝ աժանագին հատորներու մէջ ճանչնալ մեր Արեւելահայ թէ Արեւմտահայ սիրուած ու փնտռուած բոլոր հեղինակները՝ Ալիշանէն ու Աբովեանէն մինչեւ Վարուժան, մինչեւ Տէրեան եւ մինչեւ նորագոյն ընտիր դէմքերը, քերթող ու արձակագիր, իրենց գրական բոլոր սեռերու ընտիր նըմոյշներով:*

*Մէն մի հատոր — եւրոպական մեծ ազգերու նոյնօրինակ ձեռնարկներու ոճը որդեգրած — պատրաստուած է հեղինակներու կեանքին ու գործին խնամոտ ուսումնասիրութեամբ, վերլուծումով եւ կարեւոր դատուած ծանօթագրութիւններով:*

*Գործին յաջողութեան եւ արժէքի երաշխիքը կը կազմէ Հրատարակիչ Յանձնախումբը՝ կազմուած ընդհանրապէս Գրականութեան նուիրուող Հայրերէ, որոնք միանգամայն ունին հմտութիւն եւ երկարամեայ փորձը նոյն մասնաճիւղի դասաւանդութեան:*

*Մէն մի հատոր շուրջ 100 էջ, մաքուր թուղթի վրայ ընտիր տպագրութիւն՝ ճոխացած հեղինակին պատկերով:*


ԲԱԶՄԱՎԷՊ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է

Իտալիոյ համար . . . . 1300 Լիր
Արտասահմանի համար 6 Տոլար
Ֆրանսայի համար . . . 1000 Ֆրանք


digitised by